ՔՐԴԱԿԱՆ ԱԶԳԱՅՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ. ՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԸ ՊԱՏՄԱԿԱՆ ԾԻՐՈՒՄ

ՀՏԴ 323.1
DOI: 10.56246/18294480-2023.15-16

ՉԱՆԴՈՅԱՆ ՏԻԳՐԱՆ
ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի ասպիրանտ
էլփոստ՝ t.chandoyan1994@gmail.com

Հոդվածում ներկայացված են քրդական ազգայնականության վերաբերյալ առկա հիմնական տեսությունները, որոնք համեմատաբար մեծ տարածում են գտել գիտական շրջանակներում և շարունակում են քննարկումների առարկա լինել՝ մշակվելով ու ներկայացվելով քրդական ազգայնականության պատմությունն ուսումնասիրող առաջատար ուսումնասիրողների կողմից: Քրդական ազգայնականության տեսական հիմնահարցը ներառում է վերջինիս ժամանակագրական ընդգրկվածությունը, քաղաքական, սոցիալական, լեզվական և մշակութային հարցերը, որոնք տարբեր ուսումնասիրողների մոտ յուրովի են կարևորվել հիմնահարցի տեսական մշակման ընթացքում: Քրդական ազգայնականության և քուրդ ժողովրդի ծագման հարցին անդրադարձել են դեռևս 16-րդ դարի քուրդ պատմագիր Շարաֆխան Բիթլիսին և 17-րդ դարի թուրք ճանապարհորդ և պատմագիր Էվլիա Չելեբին, ովքեր քրդական ինքնության հիմքում դնում էին ցեղային սոցիալական հարաբերությունների առկայությունը: Հետագայում սրան լրացնելու և փոխարինելու եկան կրոնն ու լեզուն (Ա. Հասանփուր, Ա. Վալի), որոնց նկատմամբ վերաբերմունքը՝ որպես ինքնության սահմանիչ, տարբեր ժամանակներում փոփոխությունների է ենթարկվել՝ պայմանավորված քաղաքական հրամայականով: Տարբեր ուսումնասիրողների կողմից առաջնություն է տրվել քրդական ինքնության այս կամ այն չափորոշիչների: Քրդական ինքնության հիմնական նշանակյալը շարունակում է մնալ լեզուն: Այս տեսական մշակումների ուսումնասիրությունն իր ուրույն նշանակությունն ունի քրդական ազգայնականության էությունն ու միտումները ըմբռնելու համար:

Բանալի բառեր՝ *էթնիկ խումբ, ինքնություն, քրդական ազգայնականություն, քուրդ ժողովուրդ, քրդերեն:*

Օսմայան կայսրության մայրամուտից հետո առաջացած քաղաքական պայմաններում Մ. Քեմալի ղեկավարած ուժերին հաջողվեց վիժեցնել քրդական պետության ստեղծման գործընթացը, ինչը նախատեսված էր Սևրի դաշնագրով, սակայն ի հետևանք դրա՝ հետագա տասնամյակների ընթաց-

քում տարածաշրջանը ցնցվեց տարբեր չափերի զինված ապստամբություններից՝ որպես քրդական ազգայնականության գործնական դրսևորում:

Գոյություն ունեն քրդական ազգայնականության և քրդական հարցի առաջացման վերաբերյալ մի շարք տեսություններ: Քուրդ ազգայնական մտավորականների շրջանում տարածված տեսություններից մեկը ազգի և ազգայնականության առաջացման պրիմորդիալիստական տեսությունն է, ըստ որի՝ քուրդ ազգը գոյություն ունի անհիշելի ժամանակներից, և վաղուց ապրել է Քրդստանում: 1959թ. իրաքյան Քրդստանում ստեղծված «Kajîk» կազմակերպության համահիմադիր Ջամալ Նաբազը, զարգացնելով այս մոտեցումը[1], գտնում էր, որ քուրդ ազգայնականությունը զուրկ է դասակարգային բնույթից և բնական, դինամիկ և հարատև շարժում է, որն առաջացել է քուրդ ժողովրդի ծագման հետ մեկտեղ[2]: Բայց քանի որ քրդերը չեն ունեցել և չունեն քաղաքական ինստիտուտներ, Քրդստանը մասնատված է Թուրքիայի, Իրանի, Իրաքի և Սիրիայի միջև[3]:

Համաձայն հաջորդ տեսության՝ քրդական ազգայնականությունը առաջացել է ոչ վաղ, քան 17-րդ դարը: Ա. Հասանփուրը[4] քուրդ ազգայնականության առաջացումը կապում է քրդերի՝ իրենց հարևան ժողովուրդներից տարբերվելու գիտակցության ձևավորման հետ, ինչը, ըստ Հասանփուրի, կերպավորվել է քուրդ բանաստեղծ Ահմադե Խանիի (1651–1706թթ.) «Մամե ու Զինե» կամ «Մամ ու Զին» պոեմում[5]: Խանիի պոեմում ներկա է այն գիտակցումը, որ քուրդն (պոեմում՝ կուրմանջը[6]) իր մշակույթով տարբեր է տա-

---

[1] J. Sheyholislami, Kurdish Identity, Discourse, and New Media, Palgrave Macmillan, 2011, New York, p. 201.

[2] *Edebiyatî Kajîk,* pp. 73-74, Compiled by Hawre Bakhawan. Retrieved January 26, 2023, from http://www.bakhawan.com/hawdocs/EdebiyatiKAJYK.pdf.

[3] J. Nabaz, *Kurdistan u shorişekey: Zincîre witarêke salî 1971 be zimanî Almanî le Berlîn bo Kurd u dostanî Kurd xwêndrawetewe. Kurdo le Almanîyewe kirdûye be Kurdî*, rûp. 16, Hewlêr (Irbil), Kurdistan- Iraq: Aras Publishing House.

[4] Ամիր Հասանփուրը (1943-2017) իրանցի քուրդ գիտնական է, ում գիտական հետաքրքրության շրջանակը ներառում է քրդերենի և քրդական ազգայնականության առնչությունները և հարակից հարցեր:

[5] The making of Kurdish identity: Pre- 20th century historical and literary discourses, p. 126 In A. Vali (Ed.), *Essays on the origins of Kurdish nationalism,* Mazda Publishers, Costa Mesa, 2003, pp. 106–162.

[6] Այստեղ հետաքրքրական է հետևյալը: Ա. Խանին կիրառում է «կուրմանջ» էթնոնիմը, որը սոսկ քրդերի մի մասի ինքնանվանումն է: Սորանների և քրդական համարվող մյուս էթնիկ ենթախմբերի մասին որևէ հիշատակման բացակայությունը արդյո՞ք չի կարող ենթադրելու պատճառ հանդիսանալ, որ Ա. Խանիի կողմից միայն «կուրմանջներն» են ընկալվում որպես

ռածաշրջանում գերիշխող թյուրքերից և պարսիկներից: Ա. Խանին գիտակցում է մայրենի լեզվի կարևորությունը: Հասկանալով հանդերձ տվյալ ժամանակաշրջանի գրական լեզու ֆարսիի բարձր հեղինակությունն ու տարածվածությունը և տիրապետելով ֆարսիին՝ Այնուամենայնիվ նա իր պոեմը շարադրել է քրդերենով[7]: Այս երևույթը Հասանփուրը անվանել է «լեզվաբանական ազգայնականություն»8:

Բրուինեսսենը[9], քրդերի՝ որպես ազգի ձևավորումը և քրդական ազգայնականության ծագումը համարելով մոդեռն և հարաբերականորեն ուշ շրջանի երևույթ, դրա ծագման ժամանակը հասցնում է մինչև նախորդ դարասկիզբ: Ըստ նրա՝ որևէ էթնիկ խմբի պատկանելու գիտակցությունը քրդերի մոտ գոյություն է ունեցել վաղուց, սակայն սա նույնը չէ, ինչ համարելը, թե քրդերը մշտապես ազգ են եղել՝ ժամանակակից իմաստով: Բրուինեսսենը առաջ է քաշում այն գաղափարը, որ քրդերին միավորողը ոչ թե օբյեկտիվ, տնտեսական, քաղաքական կամ մշակութային բնութագրիչների ամբողջությունն է, այլ հենց քրդերի մեծ մասի այն գիտակցումը, որ իրենք մեկ ժողովրդի մաս են կազմում[10]: Այս գիտակցումը պայմանավորված է մի շարք հանգամանքներով, որոնցից կարևորագույնը 20-րդ դարասկզբին տեղի ունեցած քրդական ազգայնականության ծագումն ու զարգացումն էր[11]: Քուրդ ազգայնականության առաջացումն ուներ երկու հիմնական պատճառ՝ ա. այն արձագանքն էր թուրքական, պարսկական և արաբական ազգայնականությունների, որոնք նպատակադրված էին քրդերին ձուլելու Թուրքիայում, Իրանում, Իրաքում և Սիրիայում, բ. քրդական ազգայնականությունը ազդ-

---

քրդեր, և եթե դա այդպես է, որքանո՞վ է տեղին Ա. Խանիին համարել քուրդ ժողովրդի՝ որպես մեկ ընդհանուր հանրույթի, այլ ոչ թե դրա մի մասի՝ կուրմանջների ներկայացուցիչ:

[7] A. Hassanpour, *Nationalism and language in Kurdistan,* Mellon Press, San Francisco, 1992, p. 86.

[8] A. Hassanpour, *The making of Kurdish identity: Pre- 20th century historical and literary discourses, pp. 126-127, in A. Vali (Ed.), Essays on the origins of Kurdish nationalism, Costa Mesa: Mazda Publishers, pp. 106–162.*

[9] Մարտին վան Բրուինեսսենը հոլանդացի գիտնական է, մարդաբան, Ուտրեխտի համալսարանի պրոֆեսոր: Բրուինեսսենի գիտական հետազոտության շրջանակը լայն է՝ քրդագիտություն, պարսկական մշակույթ, իսլամը Ինդոնեզիայում և այլն: Հատկապես գիտական մեծ արժեք են ներկայացնում նրա դաշտային ուսումնասիրությունները քրդական հասարակական կառուցվածքի վերաբերյալ, որն ամփոփել է *Agha, Shaikh, and State: The Social and Political Structures of Kurdistan* աշխատության մեջ:

[10] Martin van Bruinessen, *Kurdish ethno- nationalism versus nation- building states: Collected articles p. 45.* Istanbul: The ISIS Press.

[11] Ibid. p. 45.

ված էր եվրոպական ազգակերտմամբ[12] (nation-building): Աբբաս Վալին[13] ևս գտնում է, որ «քրդական ազգային ինքնությունը ակնհայտորեն մոդեռն» երևույթ է[14]: Հետևաբար ժամանակակից իմաստով քրդական ինքնությունը, ինչպես բոլոր ազգային ինքնությունները, ունի պատմական և էթնիկ արմատներ և հասակակից է քրդական ազգայնակությանը, անգամ եթե այդ արմատները կառուցարկված են կամ մտացածին:

Կարծում ենք՝ քաղաքական իմաստով քրդական ազգայնականության սկզբնավորումը կարելի է համարել Շեյխ Ուբեյդուլլահի ապստամբությունը, իսկ Շեյխ Ուբեյդուլլահին՝ առաջին քուրդ ազգայնականը: 1880 թվականին ներխուժելով Պարսկաստան՝ նա պնդում էր, որ գործում է քուրդ ժողովրդի անունից[15]: Թավրիզում Մեծ Բրիտանիայի գլխավոր հյուպատոս Ուիլյամ Աբբոթին իր գործողությունների դրդապատճառները Շեյխ Ուբեյդուլլահը ներկայացնում է հետևյալ բառերով.

«*Քուրդ ազգը առանձին ժողովուրդ է: Նրա կրոնն ուրիշ է, և նրա օրենքներն ու սովորույթները տարբեր են... Քրդստանի ցեղապետերն ու կառավարիչները, լինեն նրանք թրքահպատակ, թե պարսկահպատակ, և Քրդստանի բոլոր բնակիչները՝ մեկ են և միասնական... Մենք ցանկանում ենք մեր ձեռքն առնել մեր գործերը»*[16]:

Դեռևս նրա ժամանակակիցների կողմից սա դիտվում էր որպես Օսմանյան կայսրության և ղաջարական Պարսկաստանի տարածքներում բնակվող բոլոր քրդերի միավորման և առանձին ինքնիշխան միավորի ստեղծման

---

[12] Martin van Bruinessen, Kurdish ethno-nationalism versus nation-building states: Collected articles p. 45. Istanbul: The ISIS Press.

[13] Աբբաս Վալին քուրդ գիտնական է, սոցիալ-քաղաքական տեսաբան, ով ներկայումս դասավանդում է Ստամբուլի Բողազիչը համալսարանում:

[14] Abbas Vali, Genealogies of the Kurds: Constructions of nation and national identity in Kurdish historical writing. In A. Vali (Ed.), *Essays on the origins of Kurdish nationalism* p. 104. Costa Mesa: Mazda Publishers.

[15] David McDowall, A Modern History of The Kurds, 4th edition, p. 70, I. B. Tauris, London.

[16] *Parliamentary Papers,* Turkey No. 5, 1881, Correspondence Respecting the Kurdish invasion of Persia, Sheikh Obeidallah to Dr Cochran, 5 October 1880, Inclosure in Abbott to Thomson, Urumiya, 7 October 1880.

ուղղությամբ գործողություն, որը գլխավորում էր Շեյխ Ուբեյդուլլահը[17], և նրան աջակցում էին մի քանի քրդական աշիրեթներ ևս[18]:

Որոշ հետազոտողներ Շեյխ Ուբեյդուլլահի շարժման հիմքում չեն տեսնում ազգայնականությունը կամ դա այլ գործոնների և խթանների համեմատ համարում են պակաս նշանակալի[19], այնինչ Շեյխ Ուբեյդուլլահի շարժումը պատմության մեջ առաջին դեպքն էր, երբ կոնկրետ քաղաքական գործողության հիմքում տեսականորեն դրվել է քուրդ ազգի որոշակի առանձնահատկություններ («*քուրդ ազգը առանձին ժողովուրդ է: Նրա կրոնն ուրիշ է... օրենքներն ու սովորույթները տարբեր են...*») և դրանից բխեցվել ինքնորոշման ու սուվերենության լեգիտիմություն («*մենք ցանկանում ենք մեր ձեռքն առնել մեր գործերը*»): Դ. ՄքԴոուելլի թվարկած դրդապատճառները (հայ ազգայնականության ծագում և ազգային պետության առաջացման վտանգ, շահի և սուլթանի վարած հարկային քաղաքականություն, քրդական աշիրեթների տարածքում չերքեզ և մուսուլման բուլղար փախստականների վերաբնակեցում և այլն[20]), որոնք, ըստ նրա, Շեյխ Ուբեյդուլլահի խռովության հիմնական պատճառներն էին, չեն թուլացնում այդ շարժման ազգայնական բնույթը. ի վերջո ազգայնականությունը ինքնանպատակ լինել չի կարող, այն, ի թիվս մշակութային և հասարակական որոշակի բաղադրիչների, առաջանում է նաև քաղաքական և տնտեսական ազդակների թելադրմամբ, և ելնելով դրանից՝ անհիմն ենք համարում Շեյխ Ուբեյդուլլահի շարժման հիմքում քրդական ազգայնականության դերի նվազեցումը: Եվ ընդհակառակը, տեղին ենք համարում այն դիտել որպես քաղաքական իմաստով քրդական ազգայնականության սկզբնավորման մեկնարկ:

Որևէ էթնիկ խմբի սահմանման հիմքում առկա է սոցիալական և քաղաքական գործընթացների ամբողջություն, ուստի պետք է պատասխանել ոչ

---

[17] *Parliamentary Papers,* Turkey No. 5, 1881, Thomson to Granville, Tehran, 31 October 1880. Տես նաև՝ *Parliamentary Papers,* Turkey No. 5, 1881, Abbott to Thomson, Urumiya, 7 October 1880, Inclosure 1 in No. 61.

[18] Շեյխ Ուբեյդուլլահի՝ Պարսկաստան ներխուժման ընթացքում նրան միացել են *մանգուր, զարզա, պիրան* աշիրեթների՝ կռվելու ընդունակ անդամները՝ այսպիսով կազմելով մոտ 20000-ի հասնող անկանոն բանակ:

[19] Մանրամասն տես՝ D. McDowall, A Modern History of The Kurds, 4th edition, pp. 70-74, I. B. Tauris, London.

[20] D. McDowall, A Modern History of The Kurds, 4th edition, p. 71, I. B. Tauris, London.

թե այն հարցին, թե *ինչ* է էթնիկ խումբը, այլ *երբ* և ինչպիսի պայմանների առկայությամբ *է այն գոյանում21:*

Ժամանակի ընթացքում «քուրդ» էթնոնիմի նշանակությունն ու սահմանները զգալի փոփոխությունների են ենթարկվել: Մոտավորապես այն նույն իմաստով, որով կիրառվում է այսօր, «քուրդ» անվանումը օսմանյան պատմագրության և վարչական փաստաթղթերում սկսել է գործածվել 16-րդ դարից սկսած: 16-րդ դարի Բիթլիսի քուրդ կառավարիչ, պատմագիր Շարաֆխան Բիթլիսին քրդական իշխանական ընտանիքներին և աշիրեթներին նվիրված իր հայտնի «Շարաֆնամե» աշխատության մեջ (1597թ.) որպես քուրդ է ներկայացնում միայն քրդական ցեղերի կազմում ընդգրկված քոչվոր կամ արդեն նստակեցության անցած էթնիկ միավորներին՝ մեծ հաշվով անտեսելով վերջիններիս լեզվական և դավանական առանձնահատկությունները[22]: Քուրդ համարվելու առաջնային նախապայմանը ցեղային՝ աշիրեթային սոցիալական կառուցվածքն էր[23], և ելնելով դրանից՝ կարող ենք ասել, որ Բիթլիսիի մոտեցմամբ «քուրդը» ոչ թե էթնոնիմ է, այլ սոցիոնիմ:

17-րդ դարի կեսերի ճանապարհորդ, պատմագիր Էվլիյա Չելեբին նույնպես խոսում է քրդերի մասին՝ որպես հստակ արտահայտված առանձին ժողովրդի[24]: Էվլիա Չելեբին ևս քուրդ լինելու էթնիկ պայմանավորիչ է համարում ցեղային՝ աշիրեթական սոցիալական կառույցի առկայությունը[25]:

Քուրդ ժողովրդի մեծ մասի ինքնության հիմքում երկու առաջնային բաղադրիչներ են՝ լեզուն և կրոնը: Այդուհանդերձ, ոչ բոլոր քրդերն են նույն դավանանքի կրողներ, և ոչ բոլոր իրենց քուրդ համարողներն են նույնալեզու: Քրդական հանրույթը լեզվական և կրոնական տեսակետից դեռևս բազմաշերտ է, ոչ միասեռ, ինչն էլ էթնիկ հիմնախնդրի բարդությունների հիմնական աղբյուրն է: Օրինակ՝ առկա լեզվական և մշակութային տարբերություն-

---

[21] "Introduction", in P.A. Andrews, Ethnic groups in the Republic of Turkey. Wiesbaden: Reichert, p. 19.

[22] Philip G. Kreyenbroek and Stefan Sperl (eds), *The Kurds: a contemporary overview.* London: Routledge, Martin van Bruinessen, Kurdish society, nationalism and ethnicity, refugee problems, 1992, pp. 38-39.

[23] Шараф-хан ибн Шамсаддин Бидлиси, Шараф-наме, т. I, перевод, предисловие, примечания и приложения В. И. Васильевой, М., 1967, стр. 37.

[24] Philip G. Kreyenbroek and Stefan Sperl (eds), *The Kurds: a contemporary overview.* London: Routledge,1992, Martin van Bruinessen, 'Kurdish society, nationalism and ethnicity, refugee problems', p. 38.

[25] Martin van Bruinessen, *"Kurdistan in the 16th and 17th centuries, as reflected in Evliya Çelebi's Seyahatname"*, published in The Journal of Kurdish Studies 3, 2000, pp. 1-11.

ներով հանդերձ՝ զազայախոսների ու գորանախոսների մի մասը իրեն համարում է քուրդ[26] և այդպես է ընդունվում նաև իրեն շրջապատող քրդախոսների կողմից: Այն, որ զազայերենը առանձին լեզու է, այլ ոչ թե քրդերենի բարբառներից մեկը, ինչպես որ փորձ է արվում ներկայացնել քրդական ազգայնական շրջանակների կողմից, ապացուցված[27] է, և այս փաստը զազայության՝ որպես առանձին ինքնության կողմնակիցների հիմական կռվաններից մեկն է: Նույնը գորանիի մասով:

Այսպիսով, քրդական ազգայնականության բազմաշերտությունը և պատմականորեն բարդ լինելու հանգամանքը արտացոլվում է նաև վերջինիս տեսական մշակումների վրա:

Օգտագործված գրականության ցանկ

1. P. A. Andrews, "Introduction" Ethnic groups in the Republic of Turkey. Wiesbaden: Reichert.
2. A. Hassanpour, Nationalism and language in Kurdistan, Mellon Press, 1992, San Francisco.
3. A. Hassanpour, The making of Kurdish identity: Pre - 20th century historical and literary discourses, in A. Vali (Ed.), Essays on the origins of Kurdish nationalism. Costa Mesa: Mazda Publishers.
4. A. Vali, Genealogies of the Kurds: Constructions of nation and national identity in Kurdish historical writing. In A. Vali (Ed.), Essays on the origins of Kurdish nationalism. Costa Mesa: Mazda Publishers.
5. D. McDowall, A Modern History of The Kurds, 4th edition, I. B. Tauris, London.
6. D.N. MacKenzie, "The Origins of Kurdish", Transactions of the Philological Society, 1961, 68-86.
7. Edebiyatî Kajîk, Compiled by Hawre Bakhawan. Retrieved January 26, 2023, from http://www.bakhawan.com/hawdocs/EdebiyatiKAJYK.pdf.
8. Garnik Asatrian, Prolegomena to the Study of the Kurds, Iran and the Caucasus 13, 2009.
9. J. Nabaz, Kurdistan u shorişekey: Zincîre witarêke salî 1971 be zimanî Almanî le Berlîn bo Kurd u dostanî Kurd xwêndrawetewe. Kurdo le Almanîyewe kirdûye be Kurdî, rûp. 16, Hewlêr (Irbil), Kurdistan- Iraq: Aras Publishing House.

---

[26] Այս մոտեցումը զազայական միջավայրում միանշանակ չէ. զազաների մի մասը իրենց համարում է առանձին էթնիկ խումբ, իսկ իրենց հայրենիք Զազիստանը՝ Քրդստանից առանձին երկիր: Ավելի մանրամասն տե՛ս՝ Martin van Bruinessen, 'Kurdish Paths to Nation'in Faleh A. Jabar & Hosham Dawod (eds), The Kurds: Nationalism and Politics, London: Saqi, 2006, pp. 21-48, Garnik Asatrian, Prolegomena to the Study of the Kurds, *Iran and the Caucasus 13, 2009.*

[27] D. N. MacKenzie, "The Origins of Kurdish", *Transactions of the Philological Society, 1961, 68-86.*

10. J. Sheyholislami, Kurdish Identity, Discourse, and New Media, Palgrave Macmillan, 2011, New York.

11. M. van Bruinessen, "Kurdistan in the 16th and 17th centuries, as reflected in Evliya Çelebi's Seyahatname", published in The Journal of Kurdish Studies 3, 2000.

12. M. van Bruinessen, Kurdish ethno-nationalism versus nation-building states: Collected articles. Istanbul: The ISIS Press.

13. M. van Bruinessen, 'Kurdish Paths to Nation'in Faleh A. Jabar & Hosham Dawod (eds), The Kurds: Nationalism and Politics, London: Saqi, 2006,

14. P. G. Kreyenbroek and Stefan Sperl (eds), The Kurds: a contemporary overview. London: Routledge, 1992, Martin van Bruinessen, 'Kurdish society, nationalism and ethnicity, refugee problems'.

15. Parliamentary Papers, Turkey No. 5, 1881, Correspondence Respecting the Kurdish invasion of Persia, Sheikh Obeidallah to Dr Cochran, 5 October 1880, Inclosure in Abbott to Thomson, Urumiya, 7 October 1880.

16. Parliamentary Papers, Turkey No. 5, 1881 Thomson to Granville, Tehran, 31 October 1880. Տես նաև՝ Parliamentary Papers, Turkey No. 5, 1881, Abbott to Thomson, Urumiya, 7 October 1880, Inclosure 1 in No. 61.

17. The making of Kurdish identity: Pre- 20th century historical and literary discourses, p. 126 In A. Vali (Ed.), Essays on the origins of Kurdish nationalism Mazda Publishers, 2003, Costa Mesa, pp. 106–162.

18. Шараф-хан ибн Шамсаддин Бидлиси, Шараф-наме, т. I, перевод, предисловие, примечания и приложения В. И. Васильевой, М., 1967.

KURDISH NATIONALISM: THEORETICAL BASIS IN HISTORICAL TRAJECTORY

CHANDOYAN TIGRAN
PhD student of the Institute of Philosophy,
Sociology and Law, NAS RA
e-mail: t.chandoyan1994@gmail.com

The article presents the existing main theories on Kurdish nationalism, which have gained relatively wide popularity in scientific circles and continue to be the subject of discussions, developed and presented by leading researchers who study Kurdish nationalism and its history. The theoretical issue of Kurdish nationalism encompass its chronological evolution, as well as political, social, linguistic, and cultural aspects, which have been emphasized differently by various researchers throughout the theoretical development of the issue. The issue of Kurdish nationalism and the origin of the Kurdish people has been addressed by Kurdish historian Sharafkhan Bidlisi in the 16th century and the Turkish traveler and historian Evliya Chelebi in the 17th century, who put the presence of tribal social relations at the foundation of Kurdish identity. Later, religion and language complemented and/or replaced this perspective (A. Hasanpour, A. Vali), the attitude towards which, as a determinant of identity, has undergone changes over time depending on the political imperative. Various researchers have given preference to

one or another criteria of Kurdish identity. Language continues to be the primarz indicator of Kurdish identity. Examining these theoretical developments is crucial for understanding the nature and trends of Kurdish nationalism.

Keywords. *ethnic group, identity, Kurdish nationalism, Kurdish people, Kurdish language.*

КУРДСКИЙ НАЦИОНАЛИЗМ: ТЕОРЕТИЧЕСКАЯ ОСНОВА В ИСТОРИЧЕСКОМ РАКУРСЕ

ЧАНДОЯН ТИГРАН
аспирант Института философии, социологии и права НАН РА
электронная почта: t.chandoyan1994@gmail.com

В статье представлены основные существующие теории курдского национализма, получившие относительно широкую популярность в научных кругах и продолжающие оставаться предметом дискуссий, разработанные и представленные ведущими исследователями, изучающими историю курдского национализма. Теоретическая проблематика курдского национализма включает в себя его хронологическое включение, политические, социальные, языковые и культурные аспекты, которые по-разному подчеркивались разными исследователями в ходе теоретической разработки проблемы. К вопросу о курдском национализме и происхождении курдского народа обращались курдский историк XVI века Шарафхан Битлиси и турецкий путешественник и историк XVII века Эвлия Челеби, положившие в основу курдской идентичности наличие племенных социальных отношений. Позже на смену и/или дополнение этому пришли религия и язык (А. Хасанпур, А. Вали), отношение к которым, как к детерминанте идентичности, претерпевало в разное время изменения в зависимости от политического императива. Различные исследователи отдавали предпочтение тем или иным критериям курдской идентичности. Язык продолжает оставаться основным показателем курдской идентичности. Изучение этих теоретических разработок имеет собств*енное* значение для понимания природы и тенденций курдского национализма.

Ключевые слова: *этническая группа, идентичность, курдский национализм, курдский народ, курдский язык.*

Հոդվածը ներկայացվել է խմբագրական խորհուրդ 26.05.2023թ.:
Հոդվածը գրախոսվել է 07.06.2023թ.:
Ընդունվել է տպագրության 17.11.2023թ.: